

# ՏԵՂԵԿԱՍԹԻ

## DIEGHEGADOU دی‌غه‌گادو

Հրատարակութիւն Գարեգին Հ.Բ.Ը.Մ.Դ.

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة

Զ Օ Ն

Անոնց որ բացին Հայու խոր, աղուոր  
Ազքերը իրենց  
Երկինքին այս խորթ, Հողին այս օտար,  
Եւ սպասեցին  
Մեծ այգաբացին՝  
Հաւատքով անշեղ, կարօտով անմար.

Անոնց որ թամբին տակ ճակատագրին՝  
Օր մը ապրեցան  
Սարսափը մահուան, բայց ճակասն իրենց  
Գիտցան պահել վեր,  
Ու քալել կեանքին,  
Կեանքին Հետ նորէն, երջանիկ, Հարարտ.

Եւ Հոգիներուն՝ որոնց սէրն եղաւ  
Վաշչիւ, անսամնձ,  
Որոնք սիրեցին մարդերը բոլոր  
Մասցին նոյնիսկ  
Երբ օր մը լքուած.  
Ծանօթ, անծանօթ այդ Հոգիներուն՝

Ատերիմ խօսքերն այս ձօն սրտագին:

Վահրամ Մավեան

Պայմանագիր Գաղտնի  
Հայութեան Բահացիութեան Ըստաւու Միութեան  
Դիմանու: 5931555 - 5936555  
Դիմապատճեն: 5919636

Periodical published by  
Armenian General Benevolent Union - Cairo  
Tel.: 5931555 - 5936555  
Fax: 5919636  
e-mail: agbuca@menetel.net

نشرة دورية  
جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة  
ت: ٥٦٣٦٥٥٥ - ٥٩٣١٥٥٥  
فاكس: ٥٩١٩٦٣٦

## ԽՄՐԱԳԻՐ Արար Տեօվլեան

## ԳԵՂԱՐՈՒԵՏԱԿԱՆ ԶԵՒԱԿԻՐՈՒՄ Ծառ Լուսարդուն

## ՀԱՍՏԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾԱՐՈՒԽԾՔ Ար Պոլոսեան

## ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Nubar Printing House

Թիւ 27 Նոր Շրջան  
Ապրիլ 2003

## ԲՈՎԱՆԴՎԿՈՒԹԻՒՆ

Բարի Խօսք՝ Բարից Կամեցող ՀԲԸՄիութեան	1
Հարցազրոյց՝ Թագաղիր Ծայրագոյն Վրոյ.	
Պողոս Հաքիմեանի հետ	2
«ԱՐԱՐԱՏ» Խենատիա Թղացում 1915-ի	
Եղեռնին Եւ Յետեւանցներուն Մասին	3
Աշխարհահօչակ Բեմադրիչ Վրօմ Եղոյեանի «Արարատ.ը Աղեքսանդրիոյ Մեջ	6
Եգիպտահայ Գաղութը Կ'ոգեկոյէ Ապրիլեան Եղեռնի 88-րդ Տարելիցը	7
Չորոյց Պատանիներու Եւ Պատասխանատուներու Դետ Խօսի Յակոբեան	9
ՀԲԸՄ- Գահիրեի Անդամական	
Ըստիանուր Ժողով	10
Գրքոյկ՝ Կրօնքի Եւ Եկեղեցիի Մասին	10
«Արեւ» Ամսօրեայ Արաքերեն Յաւելուածին Առաջին Պազամեակը	11
Դայկական Նոր Մետաղադրամներ	11
Դաշուեկշիռ Սաթենիկ Չագըր Ֆունտի 2001	12
Դաշուեկշիռ Սաթենիկ Չագըր Ֆունտի 2002	14
Հ.Ա.Ը.Ա. Նուպար	16
Անդամական	16



## ԲԱՐԻ ԽՕՍՔ՝ ԲԱՐԻ ԿԱՄԵՅՈՂ ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ

97-ամեայ Երիտասարդ Մըն է Դայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը:

Դամազգային այս մեծ կազմակերպութիւնը, հիմնուած 15 Ապրիլ 1906-ին, իր մշտանորոգ արիւնով, մշտահոս աղքիւրներով, միջտ նոյն գործելակերպով ու նոյն տեսլականով, հրաշագործ դեր կը կատարէ ի խնդիր հայ ժողովուրդին Մտաւր, տնտեսական եւ բարոյական զարգացման:

Երիտասարդ է ՀԲԸՄ, որովհետեւ բարի է իր նպատակը: Երիտասարդ է ան, որովհետեւ «հիմնուած ժայռի մը վրայ որ չեն կրնար ծովուն ալիքները խորտակել, եւ այդ ժայռը հայ ժողովուրդին է»:

Անխորտակելի է ան, որովհետեւ «կը նմանի աւազանի մը, որ ունի ստացող եւ բաշխող ծորակներ» որոնք անխափան կ'աշխատին ՀԱՅԵՆ լիցքաւորուելով, ՀԱՅԵՆ լիցքաւորելու համար:

Բարի է գործը ՀԲԸՄ-ի, որովհետեւ իր գլխաւոր ձգտումն է միայն բարիքը մեր ժողովուրդին եւ հայրենիքին:

**Թո՞ղ միջտ Երիտասարդ Մնայ ՀԲԸՄ:**

Թո՞ղ միջտ վառ մնայ յիշատակը անոր հիմնադիր Պօղոս Նուպար Փաշային, մեզմէ առյաւտ բաժնուած իրերայաջորդ Նախագահներուն, բարերարներուն, դեկապար ու պարզ անդամներուն, որոնց ցանած սերմերը աճեցան ու բարգաւաճեցան ու պիտի շարունակեն աճիլ ու բարիք գործել:

**Փառք եւ պատիւ իրենց:**

Առաւել կորով, պայծառամտութիւն եւ համագործակցութիւն Ներկայ Նախագահ՝ Պր. Պերճ Սեղրակեանով գլխաւորուած Միութեան աշխարհասփիւր բոլոր դեկապար մարմիններուն:

Թող ՀԲԸՄ-ի ազգապահպանամասն ու հայրենաշինական բարի գործը խաղաղութեամբ ընթանայ դեպի գալիք ամեակները:





## ՀԱՐՑՎՁՐՈՅՑ ԵԳԻՊՏՈՍԻ ԴԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՐԻԱՐքԱԿԱՆ ՓՈԽԱԾՈՐԴ ԹԱԳԱՌԻՐ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎՐԴ. ՊՈՂՈՍ ՀԱՅԻՄԵԱՆԻ ՀԵՏ



ՊՈՂՈՍ ԹԱԳԱՌԻՐ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎՐԴ. ՀԱՅԻՄԵԱՆ

**Դ- Ծնած եր 1953ին Եգիպտոս եւ Դեկտեմբեր 2002ին ստացաք Թագաղիր Ծայրագոյն Կարդապետի աստիճան:** Հիմնական ի՞նչ անկիւնադարձներ տեղի ունեցան Վերոյիշեալ բռականներուն միջեւ:

**Պ- Ծնած եմ 1953ին՝ (Եգիպտոս) Գահիրէ, ուր 1959-1967 յաճախած եմ Խորոնֆիշի Ս. Յովսէփ դպրոցը: 1967ին ընտանիքին հետ զաղթած եմ (Արժանային) Պուլէնսո Այրու: 1971ին երկրորդական ուսումն աւարտելեց՝ աշխատած եմ դրամատան մը մէց: 1976ին Աստուծոյ կոչումը լսելով մեկնած եմ Բռում, ուր յաճախած եմ Լեռնեան վարժարան: 1981ին Արժանային մէց քահանայ ձեռնադրուած եմ, Յովհաննես Եպս. Գասպարեանի ծեռամբ:**

Մինչեւ 2002 թ. եղած եմ ժողովրդապետ Արժանային Կաթողիկէ Հայոց եւ ընդհանուր փոխանորդ՝ Լատին Ամերիկայի Առաջնորդին:

2002ի Դեկտեմբերին՝ ալուանուեցայ պատրիարքական փոխանորդ Եգիպտոսի Հայ Կաթողիկէ Եկեղեցու:

**Դ- Ի՞նչ էր ծեր տպատրութիւնը, երբ ծեր մկրոտուած վայրին մէց ստացաք նաեւ Թագաղիր Ծայրագոյն Վրդ. Կարդապետի աստիճանը:**

**Պ- 15 Դեկտ. 2002ի արարողութիւնը խոր յուզումով ապրեցա: Օր մը չի երեւակայեր որ իմ մկրտուած նոյն Եկեղեցույն մէց, ուր մանկութեանս օրերուն յաճախ Ս. Պատարագին սպասաւորութիւնը ըրած եմ խորան պիտի բարձրաւայի Ս. Պատարագը մատուցանելու եւ Թագաղիր Ծայրագոյն Վրդ. Կարդապետ ստանալու, նոյնիսքն վաստակաւոր Պատրիարք Յովհաննես Գասպարեանի ծեռամբ:**

**Դ- Արժանայինահայ կաթողիկէ գաղութը ինչո՞վ կը տարբերի Եգիպտահայ գաղութեն:**

**Պ- Արժանայինահայ կաթողիկէ գաղութը անշուշտ՝ թիւվ շատ աւելի է քան Եգիպտահայ գաղութը, ունի աւելի քան ինը հարիր ըստանից, նոյնպես հայախօսներուն թիւը աւելի է: Արժանայինը սակայն, ըրհստունեայ մէծ երկիր մը ըլլայուն հայերուն ծովումը օտարենուն մէց շատ աւելի է քան Եգիպտոսի մէց:**

**Դ- Ի՞նչ է ծեր հեռանկարը Եգիպտահայ կաթողիկէ նորացած համայնքին նկատմամբ:**

**Պ- Նախ եւ առաջ պետք չէ մոռնալ որ Եգիպտոսի հայ կաթողիկէ համայնքը երկար պատմութիւն ունի եւ կարեի չէ զայն մոռնալ կամ ուրանաւ:**

Որքան ալ զի ըլլան թիւվ պետք է որ հաւատարիմ մսան իրենց ազգին եւ Եկեղեցույն, ինչ որ շատ կը դժուարանայ երբ հայկական միջավայրի մէց չեն ապրիր:

Ուրեմն ամենակարեւոր աշխատանքը մեր համայնքին ըստանիքները միշտ Եկեղեցին հետ սերտ յարաբերութեան մէց պահեն եւ:

**Դ- Ի՞նչպէս կը բացատրէք, Եգիպտահայ կաթողիկէ համայնքին անդամներուն այլ կաթողիկէ Եկեղեցներ յաճախելը՝ հակառակ որ լեզուն խոչընդոտ մը չէ:**

**Պ- Կաթողիկէ բազ կը նշանակէ տիեզերական: Ուրեմն հաւատորվ որյոր կաթողիկէ Եկեղեցները նոյն դաւանանքը ունին եւ կ'ընդունին նոյն Սրբազն Պապին գլխաւորութիւնը: Այսպեսով ունաք կը նախընտրեն իրենց ամենամօտ Եկեղեցին յաճախել քանի որ նոյն հաւանանքին կը պատկանի:**

Հարցազրոյց Վարեց՝

Հարի Շէնենեան



## «ԱՐԱՐԱՏ»

### ԻՆՉԱՎԱՏԻԴ ՅՐԱՑՈՒՄ 1915-Ի ԵՂԵՇՈՒՆԻՆ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Գահիրէ, 16-22 Փետրուար 2003: Պատմական, յիշատակելի եւ հպարտապիշ օրեր՝ Եգիպտահայութեան համար: Եգիպտա-Գանատական մշակութային յարաբեռսթիմներու ծրին և եղու, առաջին անգամ ըլլալով կազմակերպուած եր Գանատական Ֆիլմերու Փառաւոն, որուն ընթացքին ցուցադրուեցան ֆիլմերը, Գանատայի ֆիլմարուեստի մեծագոյն ներկայացուցիչներն, վերջին 15 տարիներուն իր յիշացողական հիմնատիպութեամբ միշագգային համբակի եւ մրցանակներու արժանացած, Եգիպտոս ծնած գանատահայ թեմադրիչ՝ Աթօմ Եղոյեանի:

Եգիպտոսի Մշակույթի Նախարար Պր. Ֆարուք Ջուսիի հովանաւորութիւնը վայելով փառատօնին բացումը տեղի ունեցաւ Կիրակի, 16 Փետրուարին, «Արարատ» ֆիլմին ցուցադրութեամբ:

Եգիպտոսի մօտ Գանատայի դեսպան Պր. Միշէ Տօ Սալապէրի հրաւորով, մեծ թիւվ Եգիպտացի եւ օտար պաշտօնական պատասխանատու դեմքեր, արուեստագետներ, շարժապատկերի եւ տեղեկատուութեան մարզերու աշխատակիցներ եւ փորրաթի հայ հրահրեաներ ներկայ էին փառատօնին բացումին, որ տեղի ունեցաւ «Կումիուրիա» թատերասրահին մէց:

42-ամեայ Երիտասարդ թեմադրիչ Աթօմ Եղոյեանը նոյնպէս ներկայ եր բացումին, իր արուեստին իրայատուկ պրիմակով լայն պաստառին վրայ ներկայացուցած էր, 1915-ին՝ Օսմանեան կայսրութեան կողմէ հրագործուած հայկական ցեղասպանութիւնն ու անոր ուրացումին ահազնութիւնը եւ ազդեցութիւնը, ոչ միայն հայ այլև թուրք յաջորդական սերունդներուն հոգերանութեան վրայ:

ՀԲԸ-ի Գահիրէ Մասնաճիւղին կազմակերպութեամբ եւ Գանատայի դեսպանատան գործակութեամբ, Երկուշաբթի, 17 Փետրուարի Երեկոյեան «Արարատ» ֆիլմը ներկայացուեցաւ հայ թէ օտար հրահրեայներու լայն հասարակութեան «Թահրիր» սինեմային մէջ, որուն դարձեալ ներկայ եղան Պր. Աթօմ Եղոյեան:

Ֆիլմը իր հիմնական նիւթով, հայկական «Կոռունկ», «Սայր Արաքսի», «Երազ» եւ այլ երգերուն եւ երաժշտութիւններուն սրանչելի համադրումով ու դերասաններուն համոզիչ խաղարկութեամբ ցնցի եւ անմոռանայի տպարութիւնն մը ծգեց ժողովուրդին վրայ, որ ֆիլմին վերջաւորութեան յուրընկայս ծափողովներով գնահատեց հեղինակ-թեմադրիչը:

Նոյն օրը գիշերը, ՀԲԸ-ի Գահիրէ մասնաճիւղը՝ «Արարատ» ֆիլմին ցուցադրութեան առիթով, ընդունելութիւն-ճաշկերոյթ մը կազմակերպած եր ի

պատիւ Աթօմ Եղոյեանի, Four Seasons պանդոկին մէց:

Գիշերուայ ժամը 9.00-10.00 երկարող քոքթէլն եւոց հիւրերն ու ներկաները կազմակերպէի միութեան վարչական անդամներուն կողմէ իրենց յատկացուած մեղանները առաջնորդուեցան:

ՀԲԸ-ի Գահիրէ մասնաճիւղի ատենապետ Պր. Օնսիկ Պլըքտանեան ընդունելութեան բացումը կատարեց բովանդակայից եւ տպաւորիչ Եղիշեկ Մը:

«Յիշատակելի Երեկոյթ մըն է - ըսաւ ան- բոլոր Եգիպտահայերուս համար, որովհետեւ մեզի հետ է աաշցուցից կարողութեամբ եւ բազմաթիւ բնածին յատկութիւններով օժոուած այսպիսի թեմադրիչ մը, ինչպիսին է Աթօմ Եղոյեանը:»

Պր. Պլըքտանեան Աթօմ Եղոյեանի կարճ կենսագրականը տալէ եւոց անդրադարձաւ անոր «Արարատ» ֆիլմի:

«Պր. Եղոյեան հանճարեղ արհեստագետի մը ճարտարութեամբ, ինքնատպութեամբ եւ հնարամ-տութեամբ կաղապարեց «Արարատ» ֆիլմը, ներկայացնելու համար այսպիսի զգայուն եւ վիճայարոյց ողբերգութիւն մը, ինչպիսին էր 1915-ի հայոց ցեղասպանութիւնը:»

Ապա աև նշեց «Արարատ» միշագգային չափանիշով ունեցած յաջորդութիւնը, որ ցոյց կու տայ թէ «Արարատ» միշագգային հանդութեան սրտին համելու իր առաջելութեանը մէց յաջործեցաւ, զգացնելով անոր ցեղասպանութեան ուրացումին անարդարութիւնը եւ հասկցնելով՝ թէ հայկական ցեղասպանութիւնը անցեալին պատկանող ողբերգութիւն մը չէ, այլ ընդհակառակը՝ ան հայութեան այսորուան կեանքին կիզակետն է եւ գոյութեան գուակամասը:

Պր. Պլըքտանեան վերջացնելէ առաջ իր խօսքը, դրսատայից խօսքերով ներկայացւց նաեւ «Արարատ» ֆիլմին հեռուստիին, Աթօմ Եղոյեանի կիսը՝ Տիկ. Արսինէ համեմատանը, որ անկանածօրէն ուներ իր մեծ բաժինը ֆիլմին յաջորդութեան մէց:

Ը վերջապես Պր. Պլըքտանեան շնորհակալութիւն յայտնեց Եգիպտոսի մօտ Գանատայի դեսպան՝ Պր. Միշէ Տօ Սալապէրի, Գահիրէ մէջ Գանատական ֆիլմի Փառատօնը կազմակերպելուն եւ «Արարատ» ցուցադրութիւնը իրականացնելուն համար:

Բացման Եղոյեին աւարտին, Գահիրէ Առաջնորդական Փոխանորդ Յոզգ, Յայր Աշոտ Վրդ. Մասգականեանի օրինութեան աղօթթէն եւոց սկսաւ ճաշկե-



բոլոր, համեմուած սեղանակիցներուն միջեւ վերջին երկու օրերուն մասին ծայր առած խօսակցութիւններով, որոնց առանցքը հայ թէ օտար հասարակութեան «Արարատ»ին եւ անոր հեղինակին մասին ունեցած անդրադարձն էր:

ճաշկերոյթին աւարտին օրուան պատշաճ խօսքով երոյթ ունեցան Գանատայի եւ Դայաստանի դեսպանները եւ ի վերջո Աթօն Եղոյեանը, որ իր համեստութեամբ եւ յուզումնախան ուրախութեամբ արտասանած շնորհակալական խօսքերով եւ ներկաներուն կողմէ «Արարատ»ին մասին տրուած հարցումներուն պատասխանելով, հաստատեց ոչ միայն որպես արուեստագետ, այլ նաև որպես ՍԱՐԿ՝ իր մեծութիւնը:

Ըսղումելութեան աւարտին նգիտուոսի ՀԲԸՍ-ի Շքանակային Յանձնաժողովի ատենապետ Պր. Պետք Թերզեան, Միուլթեան կողմէ Աթօն Եղոյեանին յանձնեց յուշանումը մը:

Աթօն Եղոյեանի Գահիրի կեցութեան խտացուած յայտագրով երեք օրեր, բացահիկ կանոնաւրութեամբ կազմակերպուած էին եւ ընթացան՝ շնորհի Գանատայի Դեսպանատան Մշակութային Կոորդ Պր. Ժան Ֆիլիփ Թաշճեանի:



Անցաւ Գանատական Ֆիլմի Փառատօնը, անցան յիշարժան եւ հպարտապետ օրերը, մեկնեցաւ Աթօն Եղոյեանը որ իր «Արարատ»ով փաստեց, թէ բարձր արուեստով, գուսապ արժանապատուութեամբ եւ առկայ հաղորդակցական միջոցներու օգտագործումով կարծի է հրաշըներ գործել:

Դպրուացանը մէր ժողովուրդին տաղանդաւոր զաւակով, շյունեցանը փառատօնին, անոր բացման եւ ընդունելութեան օրերուն ընթացքին, օտար պատասխանտու եւ արուեստագետ դէմքերուն կողմէ հայ ժողովուրդին հասցեագրուած դրուատայից խօսքերով, որոնցմէ մէկը մանաւանդ, Գանատայի դեսպանին կողմէ համոզումով արտասանուած ներքյշեալ խօսքն է, որ ոչ միայն կը շոյէ մեզ, այլ կը դնէ մեծ պարտաւրութեան առջեւ:

«Եթէ տիսրութեան եւ վիշտին մէջ դուք կը ցուցաբերէ այսպիսի արժանապատուութիւն եւ համեստութիւն, որ ոչ մէկ այլ ժողովուրդ կը ցուցաբերէ»:

Արժանի՝ ըլլանը մէր ժողովուրդը ընտապոր այս խօսքերուն:

U.S.

ՀԲԸՍ-ի Գահիրի Մասնաճիշտին վարչական անդամները Տիար Աթօն Եղոյեանի, Դպրուատի և Գանատայի դեսպաններուն, Տիար Ժան-Ֆիլիփ Թաշճեանի և Ալեքսանդրի ՀԲԸՍ-ի ատենապետը՝ Տիար Մարգիր Վարժանանակի հետ:

Խօսքին կարգ ուղիղ՝ Տիար Մարտիր Պալատան:

Սատած՝ Տիկ, Կարին Միհայան (Տօվկեթեան), Տիար Աթօն Եղոյեան, Օր. Անն Սարգսուն, Տիկ Թային Եղոնկացեան:

Երկրորդ կարգ

Տիար Կարին Միհայեան, Տիար Օլինի Պարտասեան, Տիար Լորյան Տօվկեթեան, Տիար Պորժ Թերզեան, Դպրուատի Դեսպան Տոքը, Ալեք Մանաւարեան, Գանատայի Դեսպան Տիար Միշել Տը Սալապերի, Տոքը Ծործ Միջննեան, Տիար Ժան-Ֆիլիփ Թաշճեան, Տոքը Վիգն Բիջննեան, Տիար Միսայ Շէմնեան, Տիար Թրիս Միքայեան, Տիար Սարգսի Վարձպետւան եւ Տիար Կարո Վարժապետւան:



Դպրուու Մերան

Թախտն աչ՝ Տիկ. Արշալոյ Պարտասեան, Տիար Ժան-Ֆիլիփ Թաշճեան, Տիկ. Արտ Թաշճեան, Տիար Միշել Տը Սալապերի, Տիար Աթօն Եղոյեան, Տոքը. Ալեք Մանաւարեան, Տիշին Իրիես Մանաւարեան, Դայր Աշոտ Վոյք, Մանաւականեան, Տիկ. Մեր Թերզեան եւ Տիար Պորժ Թերզեան:



Գանատայի Դեսպան Տիար Միշել Տը Սալապերի՝ ելութի պահում



Տիար Աթոռ Եղոյեան իր խօսքը կ'ունելէ Four Seasons պահովողին ընդունելութեան ներքայ հասարակութեան:



Դաշտավանի Դասպան Տոք. Արդի Մանաւագեան՝ կըցի պահուն



Եղիպատուի ՐԲԸ-ի Ծրջանակային Յանձնաժողովի առաջատար Արմեն Ռեբանս, Միութեան կողմէ յուշանուեր կը յանձնէ Տիար Աթոռ Եղոյեանին. Զախին՝ ՐԲԸ-ի Գանձիրի Մասնաճիշտի ատելապեա Տիար Օնիկի Պլըտանեան և աշխին՝ Դաշտավանի Դասպան Տոք. Արդի Մանաւագեան:



Տիար Օնիկի Պլըտանեան բացման եղոյթին պահուն



Տիար Աթոռ Եղոյեան, ծախին՝ Տիար Օնիկի Պլըտանեան, աշխին՝ Տիար Ռեբան Թերզեան



## ԱՇԽԱՐՀԱՐԴՈՒԱԿ ԲԵՄԱԴՐԻՉ ԱԹՈՍ ԵՐԱՅԵԱՆԻ «ԱՐԱՐԱՏ»Ը ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՄԵԶ

ՀԲԸՍ-ի Աղեքսանդրիոյ Մասնաճիւղի վարչութիւնը ծեռարկած էր Աթօմ Եղոյեանի «Արարատ» շարժապատկերը Աղեքսանդրիոյ մէջ ցուցադրելու:

Եգիպտոսի Գանատական Դեսպանատան տրամադրած «Արարատ» շարժասկարին տեսերիզը Կիրակի, 9 Մարտ 2003-ի Երեկոյեան ժամը 7.00ին, ցուցադրութեաւ Պոլոստան Ազգ Վարժարանի Մելգոնեան հանդիսարահին մէջ:

«Արարատ»ի ցուցադրութեան ներկայ էին Գանատայի Դեսպանատան Մշակութային Կցորդը, Ռուսական Մշակութային Կեդրոնի տնօրինը, փոխ տնօրինն ու տիկինը, Աղեքս. Աղաջորդական Փոխանորդը, Աղեքս. Ջայ Աղաքելական, Կաթողիկէ Եւ Աւտորանական Եկեղեցիներու Ներկայացուցչական դժբեր, մշակութային, մարզական եւ այլ կառոյցներու պատասխանատուներ ու հայ եւ օստար հոծ հասարակութիւն մը, որուն բաժնութեաւ Գահիրէի մէջ կայացած Գանատական Շարժապատկերի Առաջին փառատօնին առթիւ պատրաստուած գրքոյկը:

«Արարատ»ի ցուցադրութեան առաջ խօսք առաւ Տիկ. Մակի Վարձակատեան, որ հայերէն եւ անզերէն լեզուներով Ներկայացուց «Արարատ»ի նիւթը Եւ շօշափած



Գանատական Դեսպանատան Մշակութային Կցորդ Տիկ Ռաֆ Ժան Ժան-Ֆլիկ Թաշճեան Ելոյի պահուս:



Զախնեն աջ՝ Յառաջդիմաստե՛ Մշակութային Ընկերակցութեան Առաջնական Տիկ Ժան Լյուիսան և Տիկինը, Աղեքսանդրիոյ Թեսնական ժողովի փոխ առենապետ Տիկ Մանուկ Գալիքարծան և Տիկինը, Հ.Ս.Ը.Ը. Կանքի առենապետ Տիկ Վահե Պետրոսեան և Տիկինը Եւ Աղեքսանդրիոյ Առաջ. փոխանորդ Արժ. Տիկ Գրիգոր Բիկ. Մուրատեան:

հաղցերը, ապա՝ շնորհակալութիւն յատնեց Գանատական Դեսպանատան Կցորդ Պր. Ժան-Ֆլիկ Թաշճեանին, որուն շնորհիւ իրականացաւ «Արարատ»ի ցուցադրութիւնը Աղեքսանդրիոյ մէջ:

Պր. Ժան-Ֆլիկ Թաշճեան Ելոյթ ուսենալով դրուատեց հայ ժողովուրդին արժեցները, արտայայտութեաւ Գանատայի լաւագոյն բժմադրիներէն Աթօմ Եղոյեանի՝ Եւ անոր ծերած միջազգային յաջողութիւններուն մասին: Ան իր ուրախութիւնը

յայտնեց ըսելով, թէ իր փափաքը Եր, որ «Արարատ»ը Աղեքսանդրիոյ մէջ Եւ ցուցադրուի, Եւ այդ իրականացաւ շնորհիւ կազմակերպիչներուն:

Ապա, sound system-ի որութեամբ մէծ պաստամի վրայ ցուցադրութեաւ «Արարատ» շարժապատկերին տեսերիզը:

Շարժապատկերին ցուցադրութեամբ Եւոց յուզուած, մեծապէս տպաւորուած Եւ շնորհակալ ներկաները, կազմակերպիչ մարմնին կողմէ պատշաճօրէն հիւրասիրութան:

Կարծքը կատար բոլոր անոնց, որուց շնորհիւ մէծ յաջողութիւն արձանագրոց այս շարժանկարին ներկայացումը:

Թղթակից



Զախնեն աջ՝ ՀԲԸՍ-ի Աղեքս. Մասնաճիւղի առենապետ՝ տիկ Արագիս Վարձակատեան, Աղեքսանդրիոյ Թաղաքական ժողովի փոխ առենապետ Տիկ Գրիգոր Բիկնեան և տիկինը:



## ԵԳԻՊՏԱՐԱՅ ԳԱՂՈՒԹԸ Կ'ՈԳԵԿՈՉԵ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ 88-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

Ապրիլ 24-ը 1915-ի Եղեռնին, իրենց ինքնութեան ու հաւատքին պահպանման համար նահատակուած հայորդիներուն յիշատակը ոգեկոչելու օրն է:

Անոնց անբաղ մարմիններուն ու բափառող հոգիներուն հանգստութեան համար աղօթելու ու խունկ վառելու օրը:

Ապրիլ 24-ը նաև օրն է, բռնազրաւուած մեր հողերուն Վրայ Վերընձիւթելու մեր ոխտը Վերանորոգելու:

Ապրիլեան Եղեռնի 88-րդ տարեկիցը Եգիպտահայ գաղութը յիշատակեց նախ Գահիրէի, ապա՝ Աղեքսանդրիոյ մէջ:

Ապրիլ 24-ի երեկոյեան, Գահիրէի Ս. Գրիգոր Լուսատրիչ տաճարին մէջ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ եւ Խոգեհանգստեան պաշտօն: Պատարագեց Գահիրէի Առաջնորդական փոխանորդ՝ Հոգ. Տ. Աշոտ Վրդ. Մնացականեան: Երգեցողութիւնները կատարուեցան Եկեղեցւոյ երգախոսմբին կողմէ, դեկապարութեամք՝ Պր. Նշան Վարդեանի:

Հոգեհանգստէն եսք Եգիպտահայ գաղութի հոգեսոր պետերը, վառած մոմեր և ծաղիկներ բռնած ժողովուրդը բափօրով առաջնորդեցին նախ Եկեղեցւոյ մէջ Եղեռնի յիշատակին կառուցուած մատուքը, ուր ծաղկեապսակներ գետեղուեցան եւ հոգուց արտասանուեցաւ, ապա՝ Եկեղեցւոյ պարտէզին մէջ տեղադրուած խաչքարը:

Տպատրիչ եւ յուզիչ էր պահը, երբ բացօքեայ մքութեան եւ լուրեան մէջ, մեծերուն եւ փոքրերուն ձեռքին պլայլացող մոմերուն լոյսին տակ, հոգեւորականներուն ու իրենց հօսին շրբունքներուն բարձրացող աղօթը կը թեւածէր դէպի երկինք:

Յաջորդ օրը երեկոյեան ժամը 8.30ին, Հելլո-



Ծիծոռակաբերդ - Երեւան

պուտյ Պլըքտանեան հանդիսաբահին մէջ, համազաղութային յուշահանդէս տեղի ունեցաւ, հովանաւորութեամբ Եգիպտահայ հոգեսոր պետերուն, նախաձեռնութեամբ Ազգային իշխանութեան եւ կազմակերպութեամբ Գահիրէի բոլոր միութիւններուն:

Կոկիկ, տպատրիչ եւ որակաւոր գեղարվեստական յայտագիրը սկսաւ Ծոփենի «Սզոյ Քայլեր»ով: Արփի Ծանիթեանի ճարտար կատարուած համելով ներկաներուն հոգին, ստեղծեց օրուան պատշաճ մքնուրուտ մը: Մրաժշտութեան վերջին հնչիններուն հետ ժողովուրդը երախրուեցաւ մէկ վայրկեան յուրընկայս լուրեամբ յարգելու յիշատակը մեր բիւրաւոր նահատակներուն:

Յաջորդեց Ստեփան Վարդանեանի «Հայաստան» ստեղծագործութեան բեմականացումը:

Կիսամուր բեմահարքակին աջին գետեղուած



խաչքարը, երկու կողմերէն վեր բարձրացած զոյգ աշտանակներուն մեղմ լոյսով ու քովէն՝ խնկամանէն գուլայ-գուլայ մխացող խունկին բոյրով, օրուան խորհուրդը լիովին կ'արտայայտէր: (Յղացումը՝ Հրայր Յովակիմեամի):

Աւետիս Մովսէսեանի, Նորա Զեհնելեանի, Անի Պողոսեանի, Անի Օհաննեսեանի և Սույն Կրպյեանի, բացառիկ ապրումով և յուզումով մեկնարամումը այլապէս դժուար համեսնալի բանաստեղծութեան, ու Սիլվա Թերզիպաշեանի «Աւտանայի Ողբ» երգին կատարումը դաշնակի ընկերակցութեամբ Կասիա Շնալեանի, մերք բախիծով և մերք իրճուանքով բրբուացուին կողմները մերկաներուն:

Բժամանյութեամբ ընտրուած երաժշտութիւնը, երգերն և սահիկները ձայնափոռուած նոպէր Թաշնամանի և ցուցադրուած Արմէն Մազլումնամի կողմէ, լոյսի խաղերուն պատշաճեցումը Յարութիւն Պալեանի կողմէ, այս բոլորին համադրումը, ներդաշնակօրէն միաձուլուած ստեղծագործութեան իմաստին հետ, նույն կէս ժամ, բար լուրիսան մէջ մերկաները փոխադրեցին «վայրնշական հեռուներէն երկիր իշած» մեր ժայտեղէն հայրենիքը ու նոյնքան վաղրնշական հայոց պատմութեան բառուիները, իր վերիվայրումներով, իր եղեռնով և իր ֆենոմէն դարձած վերածնունդը և յաւերժութեամբ:

Համիխութեան գեղարուեատական բաժիննէն ետք, Գահիրէի Առաջնորդական փոխանորդ Հրայր Աշոտ Վրդ, Մանացականնան ծանօթացուց օրուան հիր բանախօսը և երահիրեց զայն իր ելոյքը ունենալու:

Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Պատմութեան Ինստիտուտի տնօրէն Տոքք. Աշոտ Մելքոննան իր ելոյքին մէջ անդրադարձաւ Օսմաննան Կայսրութեան կողմէ ծրագրուած և զործուած տեղահանութեան ու ջարդին, բրական և օտար արխիմետուն մէջ զտնուող ջարդին վերաբերեալ փաստաբուղերուն, եղեռնի ուրացումին, անոր ճանաշնան ճանապարհին կատարուած աշխատանքներուն, բոյր և օտար վարձկան պատմաբաններու կողմէ լոյս տեսած խեղաքիրուած պատմութեան գիրքներուն, մերկայ համզուանին առկայ իրադարձութիւններուն, պահանջատիրութեան, հատուցման ծեւերուն և ցեղասպանութեան հետ առնչուող այլ հարցերու մասին:

Յարգելի պատմաբանը աւելի քան մէկ ժամ գիտակամ մօտեցումով և մատչելի լեզուով ու ոճով արտասահմուած իր եղյօնվ, մագնիսացուց ներկաները:

Յուշահանդէսէն ետք թեմ բարձրացան եգիպտակայ հոգեստը պետերը՝ Գերշ. Տէր Չառտէն Արք. Չինչինեան և Գերյարգելի Պողոս Ս. Վրդ. Հարիմնան:

Գոհուրեան եւ շնորհակալութեան խօսք արտասահմեց Առաջնորդ Արք. Հայրը, ապա՝ հոգեստը հայրերը պահպանիշով աւարտեցին Ապրիլեան Եղիոնին 88-ամեակին նուիրուած յուշահանդէսը:

Աղեքսանորիոյ մէջ 27 Ապրիլի առաւօտեան, Ս. Պողոս-Պետրոս Եկեղեցւոյ կամարներուն տակ Ս. Պատարագ մատուցուեցաւ եւ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ոգեկոչելու համար խնկելի յիշատակը Ապրիլեան նահատակներուն:

Պատարագեց Աղեքսանորիոյ Առաջնորդական փոխանորդ՝ Արք. Տէր Գրիգոր Քինյ. Սուրատեան, երգեցողութիւնը կատարուեցաւ Ս. Եկեղեցւոյ երգախումբին կողմէ, դեկապարութեամբ՝ Դամիել Ազմատութեամի:

Արարողութիւննէն ետք Պողոսեան Ազգային Վարժարանի աշակերտները Տիկ. Մարիա Հայամեանի պատրաստուած յայտագիրը ներկայացուցին երգով և բանաստեղծութեամբ, իրենց ելոյքով յուզելով մերկաները:

Յայտագիրն աւարտիմ Գահիրէի Առաջնորդական փոխանորդ Հայր Աշոտ Վրդ. Մանացականնան ներկայացուց օրուան հիր բանախօս՝ Տոքք. Աշոտ Մելքոննանը, որ ինչպէս Գահիրէի մէջ, օրուան պատշաճ իր համոզիչ խօսքը ուղեց ներկաներուն:

Ապա՝ ներկաները հոգեւորականներուն առաջնորդութեամբ ծաղկեպասակ զետեղեցին Եկեղեցւոյ շրջափակին մէջ գտնուող եղեռնի յուշարձանին առջեւ ու աղօթեցին մեր մարտիրոսներուն հոգիին համար, որոնք իրենց հաւատրին ու ինքնութեան պահպանումը նուիրագործեցին ի գին իրենց կեանքին:



## ԶՐՈՅՑ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ՀԵՏ

ՀՄԸՄ ՆՈՐՊԱՐԻ Եւ ՀՄԸՄ-ի Երիտասարդ պատասխանատուներուն կողմէ 16 և 17 Ցուլուար 2003ին կազմակերպուած քանակավագություններուն եղաց, «Տեղեկառու» թրամակից Տիկ. Սոսի Թակորեան համոյապամ մը ունեցած է քանակումին կազմ մը մասնակիցներուն և պատասխանատուներուն հետ եւ արձանագրած անոնց տպարտութիւններուն ու առաջարկներուն:

Ստորև, Տիկ. Ս. Չակրեանի թրամակութիւնը:

«Տ.»

Դաշտակ այն իրողութեան որ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՐՊԱՐ մարզարանէն ներս սկառտական շարժումը դադրած է, մարզարանին եւ Գահիրէի ՀՄԸՄ-ի Երիտասարդ պատասխանատուները որոշած են մարզարանին փոքրերուն եւ պատասխներուն համար քանակում-գրոսապույտ մը կազմակերպել:

Քանակումի մը հեռապատկերը խրախուսիչ եր մարզարանին 10-16 տարեկան փոքրիկներուն եւ պատասխներուն համար, որոնք կիսամետա քննութիւնները աւարտած՝ ազատ շունչ քաշելով մասնակցեցան կազմակերպուած միջոցառումներուն:

Քանակում-գրոսապույտներ ենք. Ռիթան, Նանար, Թինան, Ալիսան եւ Ալիսը մեծ ոգեւորութեամբ հաստատեցին որ քանակումին ընթացքին եղած «յարձակում» շատ «քեֆ եր», ըստի որ յարձակուները մարզարանին Երիտասարդներն են եւ «իրականի» պես եր:

«Յարձակում... յարձակում... ծայս տուիս պահակները եւ բոլորս մեկ դուրս վագեցինք», ըստ Թինան:

«Ես կ'ուզեի յարձակողներուն մեկը բռնել» աւելցուց Նանարը:

«Ես ալ կը վախնայի որ որօշակը գողնան», ըստ Ալիսան:

«Մենք հոս-հոս կը վազվեմ մութին մէջ», ըսին Ռիթան ու Ալիսը:

«Լաւ որ տայտայ ճիճօն մեզի հետ պահակ կեցած եր, թէ ոչ պիտի չկարենայինք Այգին եւ Սիմոնին բռնել», ըստ Նանարը ուրախութեամբ:

Գեղամը, Սարօն ու Յրազդանը շատ հապրու են յարձակումին ժամանակ իրենց ցուցարերած քաջութեամբ: «Ոչ կրօն մեզմ մեկը գերի բռնէ եւ ոչ ալ կրօն որօշակը գողնալ», ըսին ասուց:

«Երասի թէ մեծ կրակ մը վառեինք եւ շուրջ երգեցինք պարէինք ու ցատկութիւնք», ըստ Վարդանը:

«Եւ ինչո՞ւ կրակին վրայ եգիպտացործն կամ քաթարա է նեփինք» աւելցուց Արմենը:

Բրիս առաջարկեց յաջորդ անգամ ֆութպոյի եւ պասթեպոյի մրցումներ կազմակերպել:

Ինչո՞ւ իրական քանակումի պես վրաններու տակ չպառկենք փոխանակ սրահին մէջ պառկելու», հարց տուաւ Թակորը: «Թող խնատ ըլլան մեզի հետ, պատիճ կ'ուզենք, կ'ուզենք լայերնիս լուալ ու կրակ վառել», աւելցուց ան մեծ խանդավառութեամբ:

Բոլոր մասնակցողները, անխտիր, համաձայնցան որ մեկ գիշեր քանակումը շատ քիչ եր: Անոնց խնդրեցին որ ապագային ան գուն 3 գիշեր ըլլայ եւ ամեն ծեւով «խսկական» քանակումի օրնըներն ու պայմանները կիրարկուին:

Օր. Մարալ Պալանեան որ իր Երիտասարդ պատասխանատու իր մասնակցութիւնը թերած էր, աւելցուց, որ աւելի երկար քանակումի մը ընթացքին է որ կապերը կը սերտանան փոքրիկներուն, պատասխներուն եւ պատասխանատուներուն միշտէ: «Քի մը աւելի խստութիւն պէտք է», ըստ ան: «Ամեն մարդ հետը Mobile-ց թերած, անդադար ծնողըին հետ կը խօսէր: Քանակում ըստ է անշատուիլի ամենուն կեանքըն, ծնողըն, հետեւիլ օրենքներուն, հնազանդիլ պատասխանատուներուն, ըլլալ քաղաքավար, կարգապահ, յարգել մեծերը եւ դիմանալ դուռար պայմաններու», ըստ ան համոզումով:

Ըստ իս այս բոլորը գործադրելու համար մի քանի քանակումի պէտք ունին ո՛չ միայն մեր փոքրիկներուն ու պատասխները այլ մասնաւոն՝ Երիտասարդները:

Դր. Խորեն Գալինեան որ քանակումի պատասխանատուներն մեկն եր, ըստ որ քանակում մը պէտք չէ որ պարզապես պտոյտի եւ ժամանակի համար ըլլայ, այլ պէտք է որ քան մը սորվեցնէ պատիկներուն: Եղած հարցամրցումները, դասախոսութիւններուն ու պտոյտներու պէտք է որ տղող գիտելիթեներու պաշարը աւելցեն:

«Մենք պէտք ունինք աշխատող, աշխոյժ եւ պատասխանատուութիւն ստանձնող Երիտասարդ տղոց եւ աղջիկներու, որպեսզի մեր ցուցմունցներուն հետեւելով յաջող քանակումներ կազմակերպեն», աւելցուց ան:

Դր. Ժիրայր Թակորեան որ իր մասնակցութիւնը թերած եր որպես հսկիչ, ըստ թէ, հակառակ որ յոցնեցուիչ եր այդքան մեծ թիւով տղաք եւ աղջիկներ զսպել ու ամբողջ գիշերը արթուն մնալ, սակայն մասնակցողներուն խանդավառութիւնն ու ուրախութիւնը տեսնելով ամեն յոգնութիւն մոռցաւ:

«Եմ պարտականութիւնս վերքացաւ երք առտուն ժամը 8.30ին բոլորը օթօպիւս նստան ու ճամբայ եւան դեպի Աղեքսանդրիա. սակայն Տիկ. Լիլիան Իրատեանն ու Տողթ. ճորդ Սիմոնեանը թէ գիշերը արթուն մնացած են եւ թէ խումբին հետ ամբողջ օր մը անցուցած Աղեքսանդրիոյ մէջ». պրաւ իրենց, աւելցուց ան:

Ինչ լաւ կ'ոլլայ եթ այս խանդավառութիւնը Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՐՊԱՐ մէջ սկառտական շարժում վերստեղծելու միջէ ուժը ըլլայ: Մենք ունինք մեծ թիւով փոքրիկներ, պատասխներ ու Երիտասարդներ. ունինք անձնուել ծնողներ ու պատասխանատուներ որոնք պատրաստ են իրենց աշակերպութիւնը թերեւու այս տեսակ շարժումի մը. ունինք ՀՄԸՄ ՆՈՐՊԱՐ պես մարզարան մը. կը մնայ այս բոլորը կազմակերպոյի «Գլուխը»:

Սոսի Թակորեան



## ՀԲԸՍ - ԳԱԻԻՐԻ ՄԱՍՆԱՅԻՆ ԱՆԴԱՍՎԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Չորեքարթի, 26 Մարտ, երեկոյեան ժամը 8.00-ին, մեկ ժամ յետաձգումով տեղի ունեցաւ ՀԲԸՍ-ի Գահիրդի Մասնաճիւղին 2001-2002 տարեշրջան-ներու անդամական ընդհանուր ժողովը, ՀԱՀԸՍ-ՆՈՒՐԱՐ մարզարանի սրահին մէջ:

Օրակարգին վրայ գտնուող հարցերուն ընսարկումն եւ գաւերացնումն ենց, 2002-2003 շրջանին համար ներկայացած տասը թեկնածու անդամներուն ինը վարչական անդամ ընտրուեցան ինք քումարկութեամբ:

Չորեքարթի, 2 Ապրիլին գումարուեցաւ նորմատիվ վարչութեան առաջին նիստը, որուն ընթացքին կազմուեցաւ վարչութեան դիւնը հետեւեալ կազմով:

Պա. Օնսիկ Պլըքտանեան	Ատենապետ
Պերճ Թերգեան	Փոխ Ատենապետ
Մարտիկ Պալաեան	Ատենապահ
Միսաք Շեքնեան	Գանձապահ
Օր. Սոնա Մարգարեան	Խորհրդական

Պա. Զրիս Միթայեեան	Խորհրդական
Ջարի Շեքնեան	Խորհրդական
Տորթ Սիմոնեան	Խորհրդական
Նորայր Տեօվլեթեան	Խորհրդական

Նորմատիվ վարչութիւնը իրեն օժանդակ նշանակեց հետեւեալ անդամները:

Տիկիններ Թալիս Երզնկացեան

Կարինէ Տեօվլեթեան - Սիկալաս
Տոթը. Վիգեն ճիզմենեան
Պա. Օնսիկ Կարիպեան
Կարո Վարժապետեան
Կարի Թիեայեան

Անհափան եւ բեղուն գործունեութիւն կը մադրեւը ՀԲԸՍ-ի Գահիրդի Մասնաճիւղին նորմատիվ վարչութեան եւ նշանակուած օժանդակներուն:

### ԳՐՑՈՅԿ՝ ԿՐՈՆԵՐԻ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ ՄԱՍԻՆ

Գահիրդի ՀԲԸՍ-ի Մաթենիկ ճ. Չագդը Դիմանարամի Դրատարակչական Յանձնախումբը ընթացիկ տարուայ Մարտին, լոյս ընծայեց «Կրօնը եւ Եկեղեցի Մասին» գրույկը:

Գրույկը 20x14.5 չափի պատկերազրոյ 35 էջերէ կազմուած կրօնա-Եկեղեցական գիտելիքներու հաւաքածոյ մըն է:

Ծաւալով փոքր, սակայն տեղեկութիւններով լցուն՝ աև հարցում-պատասխանի դրոյթով ընթերցողին կը փոխանցէ կրօնի, քիստուութեան, հայ Եկեղեցին, անոր նուհարապետութեան, խորհուրդներուն, տօներուն, ծեսերուն, զգեստներուն, սպասներուն եւ սովորութիւններուն մասին ծանօթութիւններ եւ գիտելիքներ:

Գրույկը որ հրատարակուած է առաւելաբ մատաղ սերունդի այն տղոց համար, որոնք առիթը չունին օգտուելու հայկական վարժարաններուն մէջ



շամբուած կրօնական դաստիարակութենեն, մեծապէս օգտակար է նաև հայերէն կարուացող որեւէտ տարիքի ընթերցողին համար:

Այս շնորհակալ եւ բժախնդիր աշխատանքին խմբագրութեան եւ հրատարակութեան խորհրդատուն է Պր. Տիգրան Գեղրգեանը:

Երկու թելաղորութիւն ապագային համար:

1- Եթէ այս հատորիկը վերահրատարակով, նախընտրելի պիտի ըլլար որ Եկեղեցոյ սպասներուն եւ զգեստներուն նկարներուն տակը եւս գրուած ըլլայ իւրաքանչիւրին անունը:

2- Եթէ Սաքենիկ ճ. Չագդը Դիմանարամի Դրատարակչական Յանձնախումբը յարմար դատէ, թէլաղրելի պիտի ըլլար մատաղ սերունդին համար նման հրատարակութիւններ իրականացնել հայոց պատմութեան, քաղաքակրթութեան եւ մշակույթին մասին եւս:



## «ԱՐԵՒ» ԱՄՍՈՐԵՎՅ ԱՐԱԲԵՐԵՆ ՅԱԻԵԼՈՒԱԾԻՆ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄԵԱԿԸ

Եգիպտոսի ՀԲԸՍ-ի Գահիրեի մասնահիւը, 1996 թուականին ստեղծեց «Սաթենիկ ճ. Չագըր» հիմնադրամը:

Հիմնադրամը իր ստեղծումն անմիջապես ետք, սկսաւ իր նիւթական կարելիութիւնը ի սպաս դնել Եգիպտոսի մէջ զանազան մշակութային, կրթական, առողջապահական, ընկերային եւ այլ ծրագիրներ իրագործելու:

Իր հրատարակչական գործունեութեան ծիրէն ներս, 1998 թուականին սկսեալ ան իր նիւթական լայն օժանդակութիւնը կը բերէ «Յայ Ազգային Հիմնադրամ»ի տնօրինութեամբ լոյս տեսնող «Արեւ» արաբերէն ամսօրեայ յաւելուածին հրատարակման:

Այս շատ անհրաժեշտ ամսօրեան՝ առաջինը իր տեսակին արաբական աշխարհին մէջ, անցնող հինգ տարիներու ընթացքին իր եցերը տրամադրած է հայ եւ առաւելաբար արաբական աշխարհին ծանօթ մտաւորականներու, որոնց կողմէ ստորագրուած յօդուածները մեծապես սատար հանդիսացան հայութիւնը իր անցեալով ու ներկայով, պատմութեամբ եւ մշակոյթով ու քաղաքական այժմեական հարցերով համապարփակործն եւ հսկութեամբ ծանօթացնելու արաբական աշխարհի մտաւորականութեան եւ աւելի եւս ամրապնդելու

հայ եւ արաբ ժողովուրդներու բարեկամական կապերը:

«Արեւ» արաբերէն ամսօրեայ յաւելուածին խմբագիրն է, ժամանակակից պատմութեան փիլիսոփայութեան Տոքթ. Մուհամետ Ռիֆաաթ Էլ-Իմամ:

Անցեալ հինգ տարիներում ընթացքին լոյս տեսած «Արեւ» ամսօրեային 60 թիւրուն մէջ յօդուածներ ստորագրած եւ աւելի քան 125 մնայուն աշխատակիցներ եւ պարբերաբար գրողներ:

«Արեւ» ամսօրեան 1500 տպաքանակ ունի, որուն մէծ մասը կ'առաջընկ արաբական աշխարհի մէջ գործող 70 համալսարաններու գրադարաններուն, մամուլի խմբագիրներուն ու գյուղական սիևակագիրներուն նաեւ կարգ մը այլ երկիրներու մամուլին ու անհատներու:

«Սաթենիկ ճ. Չագըր» հիմնադրամը այս սատարումով իր դեռեւ կարծ գոյութեան պատմութեան մէջ փայլուն էջ մը եւս կ'աւելցնէ:

Յարատելութիւն եւ առանց խոչընդուներու բեղուն գործունեութիւն կը մաղթենք «Արեւ» ամսօրեայ արաբերէն յաւելուածին:

«Տ.»

## ԴԱՅԱԿԱՆ ՆՈՐ ՄԵՏԱՊԱՐԱՄՆԵՐ

Դայաստանի մէջ Մարտ 31-ին, 50, 100, 200 եւ 500 արժեքով մետաղադրամներ շրջանառութեան մէջ դրուցան:

Ինչ կը վերաբերի 1993 թուականի 10, 25, 200 եւ 1998-ի 100 արժեքով թղթադրամներուն, զանոնը կարելի է գործածել մինչեւ 2004-ի Ապրիլ 1-ը: Այդ թուականին ետք անոնք կը դարդին օրինական վճարամիջոց ըլլալէ, սակայն մինչեւ 2005-ի Ապրիլ 1-ը, կարելի է զանոնց միայն Կեղորնական Դրամատան եւ անոր



կողմէ լիազօրուած դրամատուններու մէջ փոխանակել:

Նոր մետաղադրամներուն զարդանաշխները ընտուած եւ հայկական ճարտարապետական կորողներներ: Անոնք հրարմ կը տարերին իրենց գոյներով եւ կշիռներով:

Այս նոր մետաղադրամները ձեւատրուած են Կարապետ Աքրահամեանի կողմէ եւ հատուած՝ Լեհաստանի մէջ:



## ՍԱԹԵՆԻԿ ՉԱԳՅՐ ԹՂԹԱԾՐԱՐ

### ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ՍԱԹԵՆԻԿ ՉԱԳՅՐ ՖՈՆՏԻ

31-12-2001

ԳՈՅՑԵՐ	Ե.Բ.	ՊՎԵՏԵՐ	Ե.Բ.	Ե.Բ.
ԴՐԱՄԱՍՈՒՆԵՐ (Եզրար.)	18 307 497.08	Սարեմիկ Չագյր Ֆոնտի Պահեստ (1.1.01)	3 283 337.87	
ԴՐԱՄԱՍՈՒՆԵՐ (Տողար.)	1 834.33			
Ա. Չագյր Կեղծն (ՀՆԼ.)	2 966 500.00	Եթևմուցի հաշիւն փոխանցուած առակելութիւն	51 578.00	
Առողջապահական ծրագրին առ հաշիւ վճարուած 2002	3 543.30	Սարեմիկ Չագյր Ֆոնտի Ընդհ. Պահեստ		3 334 915.87
Մշակուրային ծրագրներու առ հաշիւ վճարուած	3 098.00	Սարեմիկ Չագյր Կեղծնոմի Նորոգութիւն Պահեստ (31.12.01)		1 312 522.05
Պարտական հաշիւներ	1 530.50	Սարեմիկ Չագյր Ֆոնտ (2/3 բաժին)		10 939 592.46
Աւանդ այլոց նոռ	1 221.00	Սարեմիկ Չագյր Ֆոնտ (1/3 բաժին) Վճարելի փոխանցուած (Համբ Կապա)		5 469 796.23
				10 000.00
		• Եմարելի գումարներ Պաշտօնելութեան շահանուրը	20.40	
		Տուրքերու վարչութեան (կահանութեալ վարք)	4 971.00	
		Ասիս Ասասա	229.23	
		Մշակուրային Ծրագրներուն Վճարել-Արե	10 062.00	
		Մշակուրային Ծրագրներուն Վճարել- Նիրակ Յ.	415.00	
				15 697.63
		Պարտատերեր (Հ.Ք.Ը.Մ. Գամիր.)		7 713.22
		Առողջապահական Ծրագրին առ հաշիւ գանձուած (2002)		66 480.00
		Առողջապահական Ծրագրեն օգոստուներու վճարելի 2001 տարուան համար		127 853.70
		Առողջապահական Ծրագրեն օգոստուներու ժամանգործներ (2001)		653.05
	21 285 224.21			21 285 224.21

### ԵԼԵՒԽՈՒՏՅԻ ՀԱՇԻՒ ՍԱԹԵՆԻԿ ՉԱԳՅՐ ՖՈՆՏԻ

1 ՅՈՒՆՈՒԱՐԻՆ 31 ԴԿԿՏԵՄԲՐԻ 2001

ԵԱԽՈՒՏ	Ե.Բ.	ԵՎԱՄՈՒՏՆԵՐ	Ե.Բ.
Մշակուրային Ծրագրեր	210 527.95	Դրամատնային Աւանդներու Եկամուտ -Արժի	1 110 327.28
Հայկական Սիստեմներու Ֆառլացուածներ	115 067.47	Դրամատնային Աւանդներու Եկամուտ -Մորփի	668 988.48
Պետական և Համա-Եղիսաբետական Ծրագրեր	50 000.00	Կահանութեալ Վարձակայութիւն	36 000.00
Ընկերային Օժանակարին	150 794.05	Դրամատնային Աւանդներու Եկամուտ- տղար	43.93
(Ապրուս և դարձանաւ)		Առողջապահական Ծրագրի	69 600.00
Կրաքարշակներ	200 385.28		
Առողջապահական Ծրագրեր	787 120.02		
Գումար	1 513 894.77		
Մոշակմեր	52 790.00		
Ընդհանուր Ծախսեր	56 032.93		
Կայուածական Տուրք միջնի 2001	695.07		
Ընդհանուր Ապահովագութիւն	4 670.00		
Կահանութեալ Վարձակայութեան տուրք 2001	4 971.00		
Տողարի սակագիրի Տոր.	327.92		
Գումար	1 633 381.69		
Փոխանցում Ա. Չագյր Կեղծնի	200 000.00		
Նորոգութեան Պահեստի հաշիւն			
Փոխանցում Ա. Չագյր Ֆոնտի Ընդհանուր	51 578.00		
Պահեստին			
Ընդհանուր Գումար	1 884 959.69		1 884 959.69



### ԸՆԿԵՐԱՅԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ (Ապոռւստ եւ դարման)

	Ապրուստ Ե.Ռ.	Դարման Ե.Ռ.	Բժիշկ Ե.Ռ.	Գումար Ե.Ռ.
Տ1 Խովանատքնայ	84 860.00	62 334.05	3 600.00	150 794.05

### ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ

	Աշակերտ	Գումար Ե.Ռ.
Նախակրթական և Նորկրողական Հիմնարկներ	25	31 091.48
Բարձրագոյն Ռատումական Հիմնարկներ (Գահիրէ)	20	119 117.47
Բարձրագոյն Ռատումական Հիմնարկներ (Աղեքանոցիա)	4	25 242.00
Այլ Ռատումական Հիմնարկներ	1	16 500.00
Բարձրագոյն Ռատումական Հիմնարկ (Երևան)	1	7 650.33
Կրթարդյունական ծանուցում		784.00
<b>Գումար</b>		<b>200 385.28</b>

### ԱՊՈՂԶԱՊԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

	Ե.Ռ.
Արձանագրուած մասնակիցներ	928 հոգի
Օգտուած մասնակիցներ	674 հոգի
<b>Յատկացուած Գումար</b>	<b>787 120.02</b>

### ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

	Ե.Ռ.
Եզիպտահայ մամուի մանրաժապատճի վրայ նկարահանում	4 510.50
«Արեւ» թերթի արարերեն խօսուվ ամսօրեայ յաերուած	40 062.00
«Տեղիկասու» Պարբերաթերթ	8 196.65
Ռատումական պարապմունքի յատկացում	25 000.00
Գերազանցութեան յատկացում	6 000.00
Գերազանցութեան մրցանակներ	7 097.90
Հայատամ և հայերը եզիպտական մամուլին մէջ	15 000.00
Գիրքերու հրատարակութիւն	24 104.60
Նույր գիրքեր	2 948.70
Կոմիտասի անուան Թատեակ-ՀԱԸՍ-ի 95 ամեակին առիւ	45 945.09
Ամառնային ճամբար	12 572.50
Նիբոլայ Յովհաննէսեամի դասախոսութիւններ	8 742.01
Շահէն Խաչատուրեան	10 348.00
<b>Գումար</b>	<b>210 527.95</b>

### ԴԱՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԷՎՏԿԱՑՈՒՄՆԵՐ

	Ե.Ռ.
Այժեմնիկ Տիկնանց Սիտութիւն	2 650.40
Տիգրան Երկար Մշակութային Սիտութիւն - Աղեքանոցիա	5 700.00
ՀԱԸՍ-ՆՈՒՊՊԱՐ - Հեմուպոլիս	49 552.71
Համահայեական Երկուորդ խառէր	25 000.00
Հայ Գեղարքունուսամիրաց Սիտութիւն	4 500.00
Կոկանան Սրահ - Հեմուպոլիս	4 500.00
Հայ Բարիսիրական Մարմին - Աղեքանոցիա	11 330.00
ՀԲԸՄ - Գահիրէ	11 834.36
<b>Գումար</b>	<b>115 067.47</b>

### ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

	Ե.Ռ.
Համալսարաններու կարօւ ուսանողներու պետական ֆոնտ	50 000.00



## ՍԱԹԵՆԻԿ ՉԱԳԸՐ ԹՂԹԱԾՐԱՐ

### ԴԱՇՈՒԵԿՆԻՌ ՍԱԹԵՆԻԿ ՉԱԳԸՐ ՖՈՆՏԻ

31-12-2002

ԳՈՅՆԵՐ	Ե.Բ.	ՊԱՐՏՅԱԿ	Ե.Բ.	Ե.Բ.
ՀՐԱՄԱՆՏՈՒՆԵՐ (Եղիալ.)	19 077 351.32	Սարենիկ Չագըր Ֆոնտի Պահեստ (1.1.02)	3 334 915.87	
ՀՐԱՄԱՆՏՈՒՆԵՐ (Տուար)	1 792.25			
Ա. Չագըր Կերպն (ՀԵԼ)	2 966 500.00	Ելամուտի հաշիռն վիճակցուած առանցքին	99 732.05	
Առողջապահական ծրագրին առ հաշիռ վճարուած 2002	326.00	Սարենիկ Չագըր Ֆոնտի Ընդհ. Պահեստ	3 434 647.92	
Մշակութային ծրագրերու առ հաշիռ վճարուած Պարտական հաշիռներ	7 048.00	Սարենիկ Չագըր Կերպնի Նորոգութեան Պահեստ (31.12.02)	2 105 322.05	
Ամսն այլոց մօտ	2 171.40			
Գանձման մէջ ևրոպ վիճակին	36 000.00	Սարենիկ Չագըր Ֆոնտ (2/3 բաժին) Սարենիկ Չագըր Ֆոնտ (1/3 բաժին) Վճարեալ վիճակատուցամ (Համի Կազմ)	10 939 592.46 5 469 796.23 10 000.00	
Վճարեալ գումարներ Ընկերային Ապահովագութիւն		1 062.00		
Տուարերու վարչութեան (կահաւութեալ վարձ)		5 286.00		
Պաշտոններեան շահանուք		14.66		
Տուարերու վարչութիւն- Ձեղուած և Արեցուած տուարեր		217.80		
Ասխա Աստան		229.23		
Մշակութային Ծրագրերու Վճարելի-Արժա		15 680.00		
Փարտատէրեր (Հ.Բ.Ը. Գահիր)		22 489.69		
Առողջապահական Ծրագրին առ հաշիռ զանուած (2002)		17 958.57		
Առողջապահական Ծրագրեն օգոստուներու վճարելի 2001 տարուան համար		58 080.00		
Առողջապահական Ծրագրեն օգոստուներու ժամանակուներ (2002)		32 649.50 653.05		
	22 091 189.47		22 091 189.47	

### ԵԼԵՒԽՈՒՏՔԻ ԴԱՇԻՒ ՍԱԹԵՆԻԿ ՉԱԳԸՐ ՖՈՆՏԻ

1 ՅՈՒՆՈՒԱՐԵՆ 31 ԴԵԿԵMBERԵՐ 2002

ԵԱԽՈՒՏ	Ե.Բ.	ԵԿԱԽՈՒՏՆԵՐ	Ե.Բ.
Մշակութային Ծրագրեր	139 069.80	Երամատնային Աւաղներու Եկամուտ-Ասդի	722 765.67
Հայկական Միութիւններու Ֆառկացումներ	69 775.42	Երամատնային Աւաղներու Եկամուտ-Ռուսի	1 312 800.00
Երիտասարդական գործունութիւն	6 896.80		
Պետական և Համա-Եղիալական Ծրագրեր	50 000.00	Կահանարեալ Վարձակալութիւն	36 000.00
Ընկերային Օժանակարութիւն (Ապրուս և դրամանում)	210 282.05	Տողարի ակազիին Տր.	15.62
Կրաքազակմեր	218 896.87	Առողջապահական Ծրագր	66 600.00
Առողջապահական Ծրագրեր	409 992.15	Տողարի վրայ տոկոսի եկամուտ	37.85
Գումար	1 104 913.09		
Թոշակներ	77 410.00		
Ընդհանուր Ծախսեր	41 952.40		
Ընկերային Ապահովագութիւն	8 503.20		
Դրշմատուր	422.40		
Կահանութեալ Վարձակալութեան տուր 2001	5 286.00		
Գումար	1 238 487.09		
Փոխանցում Ա. Չագըր Կերպուի	800 000.00		
Նորոգութեան Պահեստի հաշիռն			
Փոխանցում Ա. Չագըր Ֆոնտի Ընդհանուր	99 732.05		
Պահեստին			
Ընդհանուր Գումար	2 138 219.14		2 138 219.14



### ԸՆԿԵՐԱՅԻՆ ՕԺԱՌԱԿՈՒԹԻՒՆ (Ապրուստ եւ դարման)

	Ապրուստ Ե.Դ.	Դարման Ե.Դ.	Բժիշկ Ե.Դ.	Գումար Ե.Դ.
57 հովանատքեալ	125 600.00	79 882.05	4 800.00	210 282.05

### ԿՐԹԱԹՈՇՎԱԿՆԵՐ

	Աշակերտ	Գումար Ե.Դ.
Նախակրթական և Երկրորդական Հիմնարկներ	22	33 144.28
Քարձրագոյն Ուսումնական Հիմնարկներ (Գաղիք)	25	152 890.59
Քարձրագոյն Ուսումնական Հիմնարկներ (Աղեքսանդրիա)	2	16 000.00
Այլ Ուսումնական Հիմնարկներ	1	11 000.00
Քարձրագոյն Ուսումնական Հիմնարկ (Երևան)	1	5 562.00
Կրթառութեան ծանուցում		300.00
Գումար		218 896.87

### ԱՊՐՈՎԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

	Ե.Դ.
Արձանագրուած նասնակիցներ	555 հոգի
Օգտագործ նասնակիցներ	485 հոգի
Յատկացուած Գումար	409 992.15

### ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

	Ե.Դ.
«Արե» թերթի արաքերեն թերթով ամսօրեայ յանդուած	45 680.00
«Տեղեկատու» Պարբերաթերթ	10 056.00
Ուսումնական պարապմունքի յատկացում	35 500.00
Գերազանցութեան մրցանակներ	12 168.80
Հայաստան և հայերը նգիտական մամուլին մէջ	24 000.00
Գիրքերու իրատարակութիւն	11 665.00
Գումար	139 069.80

### ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԷԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ

	Ե.Դ.
Այծեմմիկ Տիկնանց Միութիւն	1 550.00
Տիգրան Երկաթ Մշակութային Միութիւն - Աղեքսանդրիա	5 000.00
ՀԱՅՍ-ՆՈՒԹԻԱՐ - Հեղուպութիւն	38 000.00
Հայ Քարեսիրական Մարմին - Աղեքսանդրիա	14 723.02
ՀԲԸՄ - Գանիք	10 502.40
Գումար	69 775.42

### ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

	Ե.Դ.
Համալսարաններու կարօւ ուսանողներու պետական ֆոնդ	50 000.00



## ՇԱՄ ԻԼ ՆԵՄԻՄԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Երկուշաբթի 28 Ապրիլի առաւօտեն սկսեալ ՀՄԸՆ ՆՈՒՊԱՐի մարզադաշտը լեցուած էր հոծ բազմութեամբ մը, որ եկած էր տօնելու համայն եգիայտացիներու գարնանային տօնը՝ Շամ է Նեմի:

Օր անցաւ խանդակառ մթնոլորտի մեջ: Կազմակերպուած էին զանազան քոյլի մարզական մրցումներ որոնց կը մասնակցէին ամեն տարիի Ներկայացուցիչներու:

Նոյն օրը կեսօրէն յետոյ, մարզարան այցելեց ՀՀԳԱԱ-ի Պատմութեան Խնստիտուտի Տնօրէն Տոքը, Փորփեսեօր Աշոտ Մելքոնեան և Տիկինը, որոնք Գահիրի Ազգային Իշխանութեան հրաւերով հիւրաբար Գահիրէ կը գտնուեին, մասնակցելու այս տարրուայ 24 Ապրիլի հանդիսութիւններուն, որոնց ընթացքին ելոյթ ունեցաւ յարգելի փորփեսեօրը

Գահիրի թէ Աղեքսանորիոյ մեց:

Պր. Աշոտ Մելքոնեանի մարզարան այցելելու բացահկ առիթեն օգոստելով, ՀՄԸՆ ՆՈՒՊԱՐի եւ ՀԲԸՆ-ի Երիտասարդ դեկավարներեն Տոքը. Ծործ Սիմոնեան, ինչորեց Տոքը. Աշոտ Մելքոնեանեն որ մարզարանին 11 տարեկանէն վար աղջկներու պասերթապոյի խումբին անդամներուն Պասերթապոյի Եգիպտական Ֆետերասիոնին կողմէ տրուած զնահատակի գիրերը եւ բաժակները, անձամբ յանձնն անոնցմ իւրաքանչիւրին. ինչ որ յարգելի հիւրը սիրով կատարեց:

Ապա, յարգելի հիւրը գրուցեց փոքրիկներուն հետ եւ զանազան հարցումներ հարցուց անոնց, ուրախանակով որ բոլորն այ հայախոս փոքրիկներ են:



«Երեսի յիշատակի նկարին մեջ կ'երեսին, Զահին աշ (Բ կարգ) Տիկը Պետք Թերգեան, Տոքը. Աշոտ Մելքոնեան, Տոքը. Ծործ Սիմոնեան, Տիկին Հուսին Մելքոնեան Զահին աշ (Ա կարգ) Ալիսա Տելիոնեան, Դիևա Մազլումեան, Ասուլ ճիզվետեան, Նաևար Գալյունեան, Մարինա Սիմոնեան, Որթը Շաքարեան:»

## ԱՆԴԱՄԱԿԱՆ

### ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԲԸՆ-ի Գահիրէի Մասմաճիւյի վարչական անդամներէն Տոքը. Ծործ Սիմոնեանի տիկնոց Նայիրիի մեծ հօր՝ Գասպար Շահմիրեամի մահուան առթիւ, մեր խորազգաց ցանկցուքիւնները Տոքը. և Տիկ. Յ. Սիմոնեանի եւ հանգուցեալին հարազատներուն: